Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-21/1-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 13.08.2021թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Ա. Օհանյանը, Ա. Սիմոնյանը և Ա. Մակարյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Արգիճիի և Աստղաձորի ջրամբարների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-21/1-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2021 թվականի հուլիսի 21-ին, ժամը 16:00-ին (հրապարակման օրը 12.07.2021թ.):

ՋԿ-ԳՀԾՁԲ-21/1-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
Մոդուլ ՍՊԸ	ք.Երևան, Ն. Զարյան 22/3, հեռ. 077772670,	info@modul.am

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 նախահաշվային արժեք-50 000 000 նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Գեղարքունիքի մարզի Արգիճիի ջրամբարի կառուցման համար				
1	Մոդուլ ՍՊԸ	375 000 000	75 000 000	450 000 000
Չափաբաժին 2 նախահաշվային արժեք-34 000 000 նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձորի ջրամբարի կառուցման համար				
1	Մոդուլ ՍՊԸ	350 000 000	70 000 000	420 000 000

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը.

Ընթացակարգի մասնակից Մոդուլ ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել են բոլոր փաստաթղթերը սակայն.

- Մասնագիտական փորձառություն (նմանատիպ պայմանագրեր) որակավորման չափանիշի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը՝ Մոդուլ ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ 3 պայմանագրերը չեն համապատասխանում հրավերի 2.4.1 կետում սահմանված պահանջներին,
- Աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով Մոդուլ ՍՊԸ-ի կողմից Հավելված 3-ով առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները հստակ չեն՝ մասնավորապես ներկայացված ինժեներ հիդրոտեխնիկ մասնագետների կատարված աշխատանքները չեն համապատասխանում ՋԿ-ԳՀԾՁԲ-21/1-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերը՝ Հանձնաժողովը 28.07.2021թ-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 29.07.2021թ. ժամը 17:30-ը շտկել անհամապատասխանությունները:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և հանձնաժողովի որոշումը

Սահմանված ժամկետում մասնակիցը՝ շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԾՁԲ-21/1-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը հանձնաժողովը հրավերի մասնակից Մոդուլ ՍՊԸ-ին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների (գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա), որը տեղի կունենա 18.08.2021 թվականին ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Վ. Օհանջանյան

_____ Ս. Ասրյան

Ա. Օհանյան

Ա. Սիմոնյան

Ա. Մակարյան

Քարտուղար Ա. Սարգսյան